ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՓԱՂԱՓԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԽԱՓՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գարսկաստանի համար տարեշրջանը 5 ֆր. կամ 2 րբլ. ոս. թղթդրմ.

Անիրչ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 9րդ տարեշրջանի (93 օգոստ.—94 ապրիլ) բաժնորդագինն է 20 ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսով համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը $2\frac{1}{2}$ ֆր. հաշուելով եւ 1894 ապրիլ ամսին անդրին չանցնելու պայմանով։

Նամակ եւ ծրար ուղղել հեռեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Թ ՏԱՐԻ ԹԻԻ 29

1893 ԴԵԿՏԵՄԲԵՐ 27

ԴԵԿՏԵՄԲԵՐ 15 (Հ. Տ.)

ԶՈՐՆԿԱՑԱԹԻ

Կը հրատարակուի Ե. եւ Շբթ. օրեր

ՊԱՏՄԱԾՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով եւ կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնելհրատարակուած ձեռագիրները։ Յանուցումներ կընդունուին հայերէն եւ ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վիճակագիր Աքիա բանտարկուած Հայերին — «Նովոսթի» լրագրի յօդուածը.— Երկին գաղթական Հայերի մասին. — Կովկասի մէջ գիւղատարածուած Հայերը. — Եազդատի յուզումը. — Ատրպատականի առաջնորդութիւնը. — Նամակ Քանատաից (Մօնրէալ). — Արմէնիայի պատասխանատուներ. — Նոր հրատարակութիւններ. — Արտասահմանի յօդուածներ. — Յանուցումներ.

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՔԵԱ ԲԱՆՏԱՐԿՈՒԱԾ ՀԱՅԵՐԻՆ

Անգլիոյ Արտաքին գործերի նախարարութիւնը Թիւրքիոյ մէջ իւր ունեցած գործակատարներէ մի տեղեկագիր ստացած է, քաղաքական ամբաստանութեամբ Աքեայի մէջ բերդարգել եղած Հայերին նկատմամբ։ Լոնտոնի L'Arménie-Armenia *լրագիրը 45 հայ աքսորականներու հետեւեալ վիճակագիրը հրատարակած է, այդ պաշտօնական տեղեկագրէ քաղելով որ սեպտ. 30 ամսաթիւ ունի։*

1. *Մշեցի դերձակ Յ. Մուրատեան, 45 տարեկան, 1892ին ձերբակալուած Մուշի մէջ և Պիթլիսի դատարաններէն 6 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1893 յունվարէն ի վեր բանտարկուած է Աքեայի մէջ։*

2. *Մշեցի ներկարար Ա. Պօյաճեան, 26 տարեկան, 1890ին ձերբակալուած և միևնոյն դատարաններէնմիևնոյն պատժի դատապարտուած։ 1892 հոկտեմբերէն ի վեր բանտարկուած։*

3. *Մշեցի կալուածատէր Վ. Կրճկճեան, 28 տարեկան, 1890ին ձերբակալուած և միևնոյն դատարաններէն 15 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1892 յուլիսէն ի վեր բանտարկուած։*

4. *Մշեցի կոշկակար Մ. Հախիկեան, 35 տարեկան, միևնոյն պատժի ենթարկուած։ 1892 հոկտեմբերէն ի վեր բանտարկուած։*

5. *Մշեցի կոշկակար Հ. Տէր-Աւետիսեան, 29 տարեկան, 1890ին ձերբակալուած և միևնոյն դատարաններէն 6 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1892 հոկտ. էն ի վեր բանտարկուած։*

6. *Մշեցի վարժապետ Մ. Եղիազարեան, 30 տարեկան, միևնոյն պատժի ենթարկուած։ 1892 յուլիսէն ի վեր բանտարկուած։*

7. *Մշեցի դերձակ Ս. Գալայճեան, 37 տարեկան, միևնոյն պատժի ենթարկուած։ 1892 հոկտեմբերէն ի վեր բանտարկուած։*

8. *Մշեցի վարժապետ Կ. Սայէեան, 21 տարեկան, 1892ին ձերբակալուած և միևնոյն պատժի ենթարկուած. 1893 յունվարէն ի վեր բանտարկուած։*

9. *Մշեցի օրիորդ Ն. Զաքէեան, 35 տարեկան, 1890ին ձերբակալուած Մանազկերտի մէջ և Մուշի դատարաններէն 5 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1892 նոյեմբերէն ի վեր բանտարկուած։*

10. *Մշեցի վարժապետ Կ. Ալէմշէեան, 28 տարեկան, ձերբակալուած 1891ին և Պիթլիսի դատարաններէն 6 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1893 յունվարէն ի վեր բանտարկուած։*

11. *Ալէքսանդրապոլի հողագործ Յ. Տէր-Միխիթարեան, 37 տարեկան, 1890ին ձերբակալուած Մուշի մէջ և միևնոյն դատարաններէն 12 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1892 հոկտ. էն ի վեր բանտարկուած։*

12. *Տէր-Քէվանքցի հողագործ Մ. Սէֆէրեան, 38 տարեկան, 1890ին ձերբակալուած Մուշի մէջ և միևնոյն դատարաններէն 15 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1892 յուլիսէն ի վեր բանտարկուած։*

13. *Վարդենիսցի հողագործ Մ. Պապէյեան, 45 տարեկան, 1891ին ձերբակալուած Մուշի մէջ և միևնոյն դատարաններէն 10 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1892 յուլիսէն ի վեր բանտարկուած։*

14. *Մուշաղկէնցի կալուածատէր Գ. Գրիգորեան, 23 տարեկան, 1890ին ձերբակալուած Պիթլիսի մէջ և միևնոյն դատարաններէն 5 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1893 յունվարէն ի վեր բանտարկուած։*

15. *Զիարէթցի հողագործ Մ. Յովհաննէսեան, 36 տարեկան, 1890ին ձերբակալուած Մուշի մէջ և միևնոյն դատարաններէն միևնոյն պատժի ենթարկուած։ 1892 հոկ. էն ի վեր բանտարկուած։*

16. *Էրզրումցի օթոցարար (tapissier, տէօշէմճի?) Մ. Մարտիրոսեան, 35 տարեկան, 1890ին ձերբակալուած Մուշի մէջ և միևնոյն դատարաններէն 6 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1893 յունվարէն ի վեր բանտարկուած։*

17. *Էրզրումցի դերձակ Ս. Հայրապետեան, 32 տարեկան, 1891ին ձերբակալուած Մուշի մէջ և միևնոյն պատժի ենթարկուած։*

18. *Էրզրումցի գրագիր Վ. Սահակեան. 24 տարեկան, միևնոյն պատժի ենթարկուած։ 1892 նոյեմբերէն ի վեր բանտարկուած։*

19. *Ալիշրնանցի Աբրահամ վարդապետ, 65 տարեկան, միևնոյն պատժի ենթարկուած։ 1893 յունվար ամսէն ի վեր բանտարկուած։*

20. *Մանազկերտցի կալուածատէր Մ. Կիրակոսեան, 30 տարեկան, 1890ին ձերբակալուած և Մուշի դատարաններէն 5 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1892 նոյեմբերէն ի վեր բանտարկուած։*

21. *Տէրիքցի հողագործ Գ. Ղուկասեան, 27 տարեկան, 1890ին ձերբակալուած Մանազկերտի մէջ և միևնոյն պատժի ենթարկուած։ 1892 հոկտեմբերէն ի վեր բանտարկուած։*

22. *Կովկայ վանուց Սիմոն վարդապետ, 50 տարեկան, 1890ին ձերբակալուած Պուլանըխի մէջ և միևնոյն դատարաններէ դատապարտուած 10 տարի բերդարգելութեան։ 1892 յուլիսէն ի վեր բանտարկուած։*

23. *Համզաշէնցի Իսրայէլ քահանայ, 70 տարեկան, միևնոյն վիճակի ենթարկուած։*

24. *Համզաշէնցի հողագործ Ս. Մուրատեան, 30 տարեկան, միևնոյն վիճակի ենթարկուած։*

25. *Համզաշէնցի (1) գիւղապետ Ներսէս Յովհաննէսեան, 90 տարեկան, միևնոյն վիճակի ենթարկուած։*

26. *Երզնկացի դերձակ Ա. Մկըրտիչեան, 65 տարեկան, 1891ին ձերբակալուած Մուշի մէջ և Պիթլիսի դատարաններէն 5 տարի բերդարգելութեան դատապարտուած։ 1892 նոյեմբերէն ի վեր բանտարկուած։*

27. *Երզնկացի Ս. Գույումճեան, Հայոց Միացեալ ընկերութեան Մուշի վարժարանների տեսուչ, 36 տարեկան, միևնոյն վիճակի ենթարկուելով 10 տարի բերդարգելութեան դատապարտուած։*

28. *Վանցի վաճառական Կ. Նալբանեան, 51 տարեկան, 1892ին ձերբակալուած և վանի դատարաններէն 15 տարի բերդարգելութեան դատապարտուած (1893 փետրվարէն ի վեր բանտարկուած)։ Սա երկար ժամանակ վան նահանգի դատարաններին և վարչական ժողովին անդամ եղած է և առանց դատաստանի դատապարտուած է, ամբաստանուելով թէ եւրոպացնակ հայ յեղափոխականներին հետ հաղորդակցութիւն ունեցած է, դինուած ապստամբ խումբերին քաջալերած է և Համիտիյէ հեծելազօրքերի կազմուելուն արգելք եղած է։*

29. *Վանցի վաճառական Յ. Քանպիւլեան, 33 տարեկան, 1890ին ձերբակալուած Կ.պօլսի մէջ և պատերազմական ատեանէն մահի դատապարտուած է իբրեւ պարագլուխ Գումգափուի խռովարարի ապմուկին։ Սակայն յետոյ Սուլթանը մահի վճիռը ցկեանս շղթայակապ աշխատանքի փոխած լինելով, 1890 օգոստոս ամսէն ի վեր բանտարկուած է։*

30. *Տրապիզոնցի լուսանկար Պ. Մարիմեան, 34 տարեկան, 1890ին ձերբակալուած և Կ.պօլսի դատարաններէն առանց դատաստանի աքսորի դատապարտուած։ 1891 մայիսէն ի վեր բանտարկուած է, թէեւ Սուլթանը չնորհ արած է ըսուելայաւ։*

31. *Տիվրիկցի ուսանող Գ. Գլճեան, 24 տարեկան, Կ.պօլիս ձերբակալուած և միևնոյն վիճակի ենթարկուած։*

32. *Սեբաստացի վաճառական Ն. Պալպալեան, 42 տարեկան, միևնոյն վիճակի ենթարկուած։*

33. *Վաղարշապատցի խմբագիր Պ. Տօնապետեան, 28 տարեկան և ռուսահպատակ (1), 1892ին ձերբակալուած Կ.պօլսի մէջ և, առանց դատաստանի, եպարքոսական հրամանով աքսորուած իբրեւ յեղափոխութեան*

(1) Այս անձի համար որ մեռած է Աքեայի մէջ հոկտեմբեր 13/25ին, սխալմամբ Համզաշիմանցի գրուած է Արմենիայի 26րդ թուին մէջ. պէտք է լինի Համզաշէնցի։

ԽՄԲ. ԱՐՄ.

(1) Թիւրք լրագիրները հրատարակեցին այն ժամանակ թէ Տիգրանակերտցի է և թրքահպատակութենէն ըստ օրինի արձակուած չլինելով, ռուսահպատակ չճանչցուիր։

ԽՄԲ. ԱՐՄ.

գրգռիչ. 1893 փետրվարէն ի վեր բանտարկուած ։

34. Սեբաստացի դերձակ Ա. Նաթուրեան, 35 տարեկան, 1890ին ձերբակալուած Կ.պոլսի մէջ և 15 տարի բերդարգելութեան դատապարտուած ։ 1890 օգոստոսէն ի վեր բանտարկուած ։

35. Թալասցի վաստաբան Գ. Կիւլպէնկեան, 50 տարեկան, 1888ին ձերբակալուած Կ.պոլսի մէջ և ցկեանս աքսորի դատապարտուած ։ 1892 էն ի վեր բանտարկուած է ։

36. Կ.պոլսեցի Աբիստակէս վարդապետ, 45 տարեկան, 1891ին ձերբակալուած և առանց դատաստանի աքսորուած ։ 1892էն ի վեր բանդարկուած ։

37. Կ.պոլսեցի Ե. Պօյաճեան, 36 տարեկան, միեւնոյն վիճակի ենթարկուած ։

38. Կ.պոլսեցի Գրագիր Մ. Տաքէսեան, 36 տարեկան, 1893ին ձերբակալուած և միեւնոյն վիճակի ենթարկուած։ 1893 մարտ ամսէն ի վեր բանտարկուած ։

39. Կ.պոլսեցի ձկնորս Կ. Ցակոբեան, 38 տարեկան, 1892ին Նիւյէի մէջ ձերբակալուած և միեւնոյն վիճակի ենթարկուած ։ 1892 մարտէն ի վեր բանտարկուած ։

40. Պրուսացի Ցակոբ, 28 տարեկան, միեւնոյն վիճակի ենթարկուած ։

41. Կ.պոլսեցի չբլոզ մանրավաճառ Ե. Սերոբեան, 36 տարեկան, ձերբակալուած 1892ին և միեւնոյն վիճակի ենթարկուած ։ 1892 մարտէն ի վեր բանտարկուած ։

42. Ադիլճանցի հողագործ Մ. Զաքօ, 24 տարեկան, 1891ին Մուշի մէջ ձերբակալուած և, իբրեւ քաղաքական աւազակապետ, 4 տարի աքսորի դատապարտուած ։ 1893 յունվարէն ի վեր բանտարկուած ։

43. Ադիլճանցի հողագործ Մ. Մկրտիչեան, 26 տարեկան, միեւնոյն վիճակի ենթարկուած ։

44. Կարնեցի հողագործ Ս. Սաղաթէլեան, 33 տարեկան, միեւնոյն վիճակի ենթարկուած ։

45. Բերդակցի հողագործ Գ. Տէր-Յովհաննէսեան, 36 տարեկան, միեւնոյն վիճակի ենթարկուած ։

Շղթայակապ աշխատանքի դատապարտուածներէն զատ, բոլոր ձերբակալուածները՝ թէեւ աքսորուած, կը բնակին մի խանի մէջ որի վարձը իրենք կը վճարեն և դրսի հետաքրքրութիւն չեն կրնար ունենալ ։ Իրենց կը տրուի օրական 300 տրամ հաց միայն. ուրիշ ամեն բան իրենք պիտի ճարեն ։

«ՆՈՎՈՍՏԻ» ԼՐԱԳՐԻ ՑՈԴՈՒՄԸ

Պետերբուրգի «Նովոստի» լրագրի նոյեմբերի 17.ի համարում տրված է հետեւեալ թղթակցութիւնը Լոնդոնից, որ ահա առաջ ենք բերում ։

«Հայոց հարցը մտնում է իր սուր կրիտիքական շրջանի մէջ ։ Հասունացած անցքերը կարող են խոշոր միջազգային բարդութիւններ ստեղծել ։

«Հայերը յայտարարում են, որ իրանք վերջնականապէս յոյսը կորցրել են Բերլինի դաշնագրի յօդուածների իրագործման վրա, որոնցով խոստացվում էր իրանց՝ մեծ պետութիւնների հաւաքական պաշտպանութիւնը ։ Հետեւաբար, Թիւրքիան հրաժարվեց որ և է վերանորոգութիւններ մտցնելուց ։

«Այդ հիման վրա և հայերը վճռեցին Ռուսաստանի հովանաւորութեան տակ մտնել և խնդրել ռուս կառավարութիւնից՝ գրաւել Հայաստանը կարսում եղած զօրքերով ։

«Հայերը յոյս ունեն, որ ռուսաց կառավարութիւնն էլ կը նշանակի իրենց համար մի նահանգապետ և ընտրողական ինքնավարութիւն կը կազմի աւելի լայն իրաւունքներով, քան թէ ղեմստվոներն ունեն ։

«Մտադրութիւն կայ այդ որոշումը առժամանակ գաղտնի պահել, բայց դրանց վերաբերեալ լուրերը հասան Լոնդոնի քաղաքական շրջաններին և այստեղ հասկանալի մեծ տպաւորութիւն գործեցին ։

«Լոնդոնի դիպլոմատներից մի քանիսները հայերի դիտաւորութիւնները իրագործելի են համարում, որովհետեւ Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնները, յիրաւի, չը կատարեցին Հայաստանի վերաբերութեամբ իրանց յանձն առած պարտաւորութիւնները ։

«Հաստատ աղբիւրներից քաղած այդ բոլոր տեղեկութիւնները հաղորդելով, ես աւելորդ եմ համարում այդ փաստերի գնահատութիւնն անել, որովհետեւ համոզված եմ, որ Ռուսաստանը չի համաձայնվի ընդունել հայերի առաջարկութիւնը»։

ԿՐԿԻՆ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Համարեա օր չէ անցնում, որ մի քանի գաղթական ընտանիքներ չը գան կաղզուան, կարս և սահմանադլխի այլ տեղերը Թիւրքաց-Հայաստանից ։ Մինչեւ այժմ չարունակ գաղթում էին ալաշկերտցիները, մշեցիները և խնուսցիները, իսկ այժմ դրանց վրա աւելացել են և էրզրումցիները ։

Իւրաքանչիւր գաղթական, առնելով իր հետ անգութ քրդերի աւազակութիւնից ծագած մի կամ երկու եղը, իր ընտանիքն ու մի քանի փալատ կօրներ՝ ճանապարհ է ընկնում դէպի Անդրկովկաս, յուսալով այստեղ աւելի հանգիստ կեանք վարել։ Ձիշդ է, նա այստեղ չէ ենթարկվում ասպատակութեան և սպանութեան, բայց ենթարկվում է դրանից աւելի ծանր և չքաւոր դրութեան— աղքատութեան ու հիւանդութեան ։

Այն գաղթականը, որը դուրս է իր ունեցածից միշտ առատ բաժիններ էր հանում աղքատներին աւերվերին, այսօր դառնէ դուռ ընկած՝ մի կօր հաց է խնդրում, կամ մէկից մի գործ, որ կարողանայ իր սովատանջ ընտանիքը մի կերպ պահել ։ Ով ծանօթ է Ալաշկերտի, Վանանդի և առհասարակ Բարձր Հայքի ձմեռվայ սաստկութեանը՝ նա կարող է գաղափար կազմել այդ մերկ ու թշուառ մարդկանց դրութեան մասին, այդ մարդկանց, որոնց կարծէք բնութիւնը ստեղծել է միմիայն տանջվելու և հարստահարվելու համար ։ Մարդու սիրտ է կըտրատվում, երբ տեսնում է ծնողները՝ եղի վրայից վայր առնելիս իրանց մեռած զաւակը, որ ճանապարհի սաստիկ ցրտից և քաղցից՝ սատրերի վրա կամ ձորերի մէջ իր շունչն է փչել ։

Արտասուքի հեղեղներ են թափվում այս թշուառները իրանց հայրենիքի մէջ եղած հարստահարութիւնները և սովը յիշելիս ։ «Եթէ մեզ թողնեն հանգիստ ապրելու, մեր քրանքի արդիւնքով մենք էլ կուշտ կապրենք, իրանք էլ», ասում են արտասուելով թշուառ գաղթականները ։

Ցաւալի և ծանր է մանաւանդ այն հանգամանքը, որ գաղթականների հոսանքը չէ դադարում, չը նայած ձմեռվայ սարսափելի սառնամանիքին։ Երեսում է թշուառների վիճակը մայր-Հայրենիքում այնքան սոսկալի, այնքան անտանելի է, որ նոյն իսկ երկիւղալի ճանապարհները և սառնամանիքը չեն կարողանում արգելք լինել այդ ահագին վտխտուտին հայրենի երկրից ։

(Մշակ).

ԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԱԾ ՀԱՅԵՐը

Մեզամած 1892 թուականին զինուորագրութեան ենթարկուած են Կովկասի մէջ 25,100 մարդ որոյմէ 1,103 Հայ են ։ Այդ զօրքեր բաժնելով իրենց ազգութիւնների, կը տեսնուի որ Կովկասեան բանակին ամենէն շատ զօրք տուողը Հայերն են եղած։ Հայերէն յետոյ կուգան վրացիները որոնցմէ 1,033 մարդ ենթարկուած են 1892 թուականի զինուորագրութեան ։

ԵՈԶՂԱՏԻ ՑՈՒԶՈՒՄԸ

Կ.պոլսէն կը հեռագրեն «Թայմզ»ին թէ վերջերս Եոզղատի Թիւրքերին և Հայերին միջեւ պատահած կռիւը այնչափ ծանր մի բան չէ որչափ կը խօսուէր ։

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ատրպատականի առաջնորդական խնդիրը ընդ երկար վեհ. կաթողիկոսի միտքը յոգնեցնելէ յետոյ, վերջապէս լուծում ստացաւ թուականիս քսան օր առաջ ։ Ժողովրդեան կողմանէ արդէն խնդրուած Աղուանեան Գրիգորիս Սրբազանն հաստատուեցաւ Առաջնորդ վիճակին ։ Որովհետեւ յիշեալ եպիսկոպոսը սինոդական է, ըստ օրինի արձակել տալու համար դրուեցաւ նախարարութեան, որմէ և ստացուեց Թոյլտուութիւն Պարսկաստան երթալուն ։

Ատրպատականը բազմակարօտ թեմ է և նորընծաի Առաջնորդը, թէպէտ զանազան տեղեր վարած առաջնորդական պաշտօններուին փորձառու, այլ այսու ձերացած լինելով այժմ, բոլորովին մինակ չձգելու համար, վ.հ.հափառ Հայրապետն՝ իւր գաւազանակիր Գր. Ծ. Սահակ Ծայր. վարդապետ Այվատեանին հրամայեց գընալ Աղուանեան Սրբազանի հետ Դավրէժ և այնտեղ ըստ առենոյնի աջակից լինելով նմա, գործել միասին։

Մենք երկար ճեացած ենք Ատրպատականի զանազան կողմերը և մեր կրցածէն չափ լաւ ուսումնասիրած լինելով այդ երկիրը, ազդեցիկ և կամքի տէր մի վիճակաւորի պէտքն զգացած և ազգը համար Մխիթարեան Ստեփաննոս եպիսկոպոսի մահէն վերջ առաջին անգամ լինելով մտիկ միջոցաւ առնելախնամարհաբար վեհափառի բարձր ուշադրութիւնն հրաւիրել էինք այդ թեմը կառավարելու համար Տաճկաստանի մի եկեղեցական նշանակել այդտեղ, ըստ որում, աննշան բացառութեամբ, ռուսահայ և եկեղեցականաց գործ չէ արդի ժամանակիս մէջ այդտեղ Առաջնորդութիւն անելը, (Տեսնել մեր յօդուածն 1892 օգոստոս 11 թուակիրանաւ Արեւելքի մէջ). ժողովուրդն էլ զգացած լինելով այդ պահանջ, պաշտօնապէս արտայայտց առաջին անգամ ժողովրդային ընտրութեամբ Գրիգորիս Սրբազան Աղուանեանն ընտրելով Առաջնորդ ։

Այդ ընտրող ժողովուրդը, մեկ խօսքով՝ թեմին ամբողջ իրաւունք ուներ ազգօգուտ գործեր ակնկալելու իւր նոր Առաջնորդից. լի են լճացուած խնդիրներ՝ որոնք լուծում ստանալու համար գործունեայ Առաջնորդի ներկայութեան կը կարօտէին. վասն զի ենք որ բարեբաղդ կը լինի Արարատականը՝ որ երկար զուրկ մնալէ յետոյ, վերջապէս կ'ունենայ մի այնպիսի առաջնորդ, որ Տաճկահայաստանի զանազան տեղերը պաշտօն վարած և այնտեղ ազիտակամբուռ եղած է և մի այնպիսի օգնական՝ որ բացի վեհ. Հայրապետի ձեռնտաւունը լինելէ, ընդ երկար նորա խնամոց տակ ապրած, ղարգացած և վարած է նաեւ առաջնորդական պաշտօններու։ Այժմեան Հայր Սուրբը գործունեայ մի վարդապետ է և ժողովրդասէր. ուր որ գնացած է պաշտօնի, Եւդոկիա, Պիւլէճիք և ի վերջկոյս Մարաղայ մէջ ժողովրդեան համակրութիւնն առնին դրաւած է և այսու հետ առաւել ղօրացած և գործած է ղի մի հովուի համար չկայ այնքան մեծ բան որքան իւր ժողովրդէ սիրուիլն. և ի նշան իւր բարեմասնութեանց վարձատրուած է իւր Հոգեւոր Ծնողէն՝ ծայրագոյն վարդապետի աստիճան առնելով 1888 թուին և այս անգամ էլ վարդապետական լանջախաչ ստանալով, զոր կրելու համար առանձին կոնդակ չնորհեց վեհ. կաթողիկոսը ։

Արդէն այս առթիւ Գեր. Ազուանեան եպիսկոպոսին էլ Արքեպիսկո-

պոսական տիտղոս չնորհած էր վեհափառը, նոյնպես առանձին կոնդակով։

Գեր. Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոս Աղուանեան և Գեր. Տ. Սահակ Ծայրագոյն վարդապետ Այվատեան երէկ մեկնեցան Ս. Էջմիածնէն ուղեւորելու համար դէպ ի Դավրէժ. իսկ ընդ հետ կըտանին նաեւ Նորին Ս. Օծութեան յանձնած առանձին թըղթերն Արեգակնափայլ Շահին, Բարձր Գահաժառանգ Իշխանին և աւագանւոյն համար։

Քաղաղութիւն և կարողութիւն մաղթելով, կը ցանկանք ի սրտէ քեզմնաւոր գործունէութիւն։

1893 դեկտ. 3/15.

ՎԱՂԻՆԱԿ ՏԷՐՈՒՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ՔԱՆԱՏԱՒԷՆ

Մօնթրէալ, 23 նոյեմբեր 93.

(Շար. 28րդ թուոյն եւ վերջ)

Քանատա աննկարագրելի ձմեռ ունի։ Ֆահրէնհայթի ջերմաչափով սառուցման կէտը զերոյից 32 աստիճան վեր է։ Ցուրտը ընկնելիս անդիկը իջնում է ոչ թէ մինչեւ 32, ոչ թէ մինչեւ 0 որ սառուցման կէտից 32 աստիճան ցած է, այլ 25 և երբեմն 40 աստիճան 0-ից ցած։ Է՛լ երևակայեցէք համեմատելով ձեր ձմեռների հետ։ Բայց ո՛չ. եթէ չասեմ անկարելի, գոնէ չափազանց դժուար է չտեսած բանը ըմբռնել ճիշտ այնպէս ինչպէս որ է։ «Դժոխք» անունը սարսափեցնում է ձեզ. բայց ո՞րքան է տեւում այդ սարսափը։ Այլ սակայն հողի մէջ կորսուած փոքրիկ փուչի պատճառած ցաւը, երբ մտնում է քո մատդ, դժոխքի երեւակայական սարսափից քառասուն անգամ աւելի է տեւում։ Կարդալով Տաճկահայերի կրած հալածանքները, մենք պարսկահայերս, «Ա՜հ, ո՛րքան դժուար է խեղճերի դրութիւնը» ասում ենք ցաւակցելով (շատերս էլ երդում կուտեմ, բոլորովին սուտ կերպով), բայց ո՞րքան է տեւում այդ «ցաւ»ը. — վիճած տեղից մինչև փողոց դուրս գալը։ Իսկ երբ փուչը մտել է մեր մատը, ջուրն ընկած ձան նման ի՜նչպէս արագ արագ ենք չարժում մեր թևերը, ի՜նչպէս աչխատում ենք լուն ուղտ չինել։ Էլի հերացայ։ Այստեղի ցրտի ո՛ր աստիճան լինելուս մասին էլ խօսքը։ Վերջացնեմ։ Իրական ուժի զօրութիւնը երեւակայութեամբ ըմբռնելու համար, նպատակի վերայ ուղղած անչփոթ ուշադրութիւն և նուրբ մտածողութիւն է հարկաւոր։

Նոյեմբեր 23 է։ Այսօր Անգլիացիների 5 տօներից մէկն է։ Ազգային Շնորհակալութեան Օր (National Thanksgiving Day) է։ Մի քանի օր առաջ արդէն լսել արուած էր թէ այդ օր երեկոյեան ժամ 8ին Ս. Եկեղեցու Լէքչըր Հօլում (Lecture Hall) ազգային մի թինկ է լինելու։ Դեղին նատարանները մի-մի, երկ-երկու, վեց վեց ծածկուած են Քանադացիների գոյնզգոյն հանդերձներով։ Մի բան որ այստեղ աչքի է ընկնում, սա է. մի թինկերում լսողների 9/10ը կին կամ օրիորդներ են։ Պարսկաստանի ճիշդ հակառակն է։ Այնտեղ Ս. Վարդանանց տօնի առթով ներկայացրած թատրոնում, 49 տղամարդի հետ հազիւ թէ մէկ օրիորդ գտնուի, իսկ այստեղ 49 օրիորդի հետ հազիւ մէկ տղամարդ։ Մի թինկը բացուեցաւ մի երգով, որ ասում էր թէ ինչպէս Աստուած օրհնել է Քանադացիների հունձը այս անցեալ ամրոց մէջ։ Լէքչըր ածը այս անգամ էր Պատ. Մ. Զէնսի։ Նրանից էր «Ինչ հաստատեանմ Տէրոջը նորա բոլոր բարութեան համար, որ ինձ արաւ» (Սաղմոս ՃԼԶ, 12)։ Ամբողջ լէքչըրը ո՛չ, բայց կաչխատիմ մի մասը դնել այստեղ մի գաղափար տուած լինելու համար։

— Մենք Աստծուն չնորհակալ լինելու շատ պատճառներ ունինք, ասաց։ Քանադան թէև մի փոքրիկ կառավարութիւն (1) (dominion) է, բայց այս մի քանի տարուոյ մէջ տեսէք թէ որքա՜ն է յառաջդիմութիւն արել։» Եւ սկսեց անուանել մէկ-մէկ երկաթուղիների աւելանալը, քոլէջների շատանալը, ընթերցարանների բազմանալը, նոր հիմնուած ձրի հիւանդանոցի գացող տարի բացուելը և, չեչտելով, նաև այն թէ Քանադան ո՛րքան մեծ ուշադրութիւն է գրաւել Շիքակոյի ցուցահանդիսում իր բաժնովը և այլն, շարունակեց. «Մենք պէտք է չնորհակալ լինինք որ գտնուում ենք երկու մեծ անձնաւորութիւնների, Նորին Մեծութիւն Վիքթորիա Թագուհու և ընդհանուր կառավարչապետ Լորտ Արէյդինի խնամքին տակ։ Մինչև հիմա Քանադային՝ Թագուհուց նչանակուած կառավարչապետները թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական գործերում չեն ունեցել այնքան բարձր դիրք, որքան մեր նոր կըվըրներ ջեներալ (ընդհանուր կառավարիչ) Լորդ և Լէդի Արէյդիններըն. յոյս ունինք որ ազնիւ ամուլը իր ամրողջ մտաւոր և նիւթական ոյժը գործ կածէ բարիի և ճշմարտութեան համար։ Պէտք է չնորհակալ լինինք որ այս տարի ո՛չ մի երկաթուղային դէպք չի եղել, պէտք է չնորհակալ լինինք որ մեր հունձը (հողի մշակութեան մասին խօսելիս) թէև չափազանց չատ-չատ չէ եղել, բայց այնքան եղել է որ մեզ գոհացնէ։ Թո՛ղ երախտագէտ լինենք Աստուցիր ամեն օր տուած օրհնութիւնների համար։ Աչխատենք բարի լինել։» Մի հանդանակութիւն էլ եղաւ քաղաքի միսիոնարական գործին համար։ Մի թինկը փակուեցաւ մի երգով, որ երգեց առաջուց պատրաստուած Քահանատուհիների երգեցիկ խումբը։ Նրա յաջորդ գիշերը նոյն սրահում մի նուագահանդէս (concert) տրուեցաւ ուր առաջին անգամ լսեցինք էդիսոնի ձայնագրի (phonograph) խօսելը, երգելը, լացելը և այլն։

Աչնան, հնձքից և կալից պրծնելուց յետոյ, Հրեայներն էլ մի այսպիսի տօն են կատարում։

Մենք էլ մեր կողմերում, ցրտերը ընկնելիս մի օյին կը սարքենք իրրև տօն. էլ չեմ իմանում այս նոյն Շնորհակալութեան տօնի համապատասխա՞նն է թէ այն էլ մի ուրիշ բան է։ Բայց մենք ի՞նչպէս ենք անում։ Ո՛չ եկեքտրական լոյս կայ, ո՛չ երգ, ո՛չ էլ աթոռ։ Փուրսինները դրուած են լինում։ Չաւաքուում են այնտեղ ում կըչէվին (ձմրան տուն) մեծ է։ Լէքչըր անողը-օյինչին նա է, որ կատակ, միմոսութիւններ և այլն չատ գիտէ, որ ամենից չատ կը ծիծաղեցնէ իրենց։ Ապաս է. մին (2), որ կարող է երեխայի պէս լացել, հարրածի նման մանգալու ծախողի նման «նոր ձու, լաւ ձու, ոլպատակ ձու» ասել, թոյլաղջկայ պէս հրհրալ, կոյրի նման նայել, մի խօսքով, Ապաս էմին, որ իր ամեն մի չարժումով, ամեն մի նայուածքով բոլորին կարող է ծիծաղու կոտորել, յանկարծ բռնելով իր ուսկնդիրների մէկի թևից (անչուշտ տղայ), մտնում է կէզնան, տան ներքին մութ մասի մէջ։ Այնտեղ չուան, ալիւր, գաւազան, հին փափախ, ձմեռուայ համար մորթուած ոչխարի մորթը և այլն ինչ որ իրեն հարկաւոր է ամենը պատրաստ գտնում է։ Եթէ մորթ չլինի, կանանց հին սաւանն է նոյն պաշտօնը կատարում։ Տղայի երեսը սպիտակացնում է ալիւրով, չուանը կապում է վզին, ոչխարի մորթն էլ փաթթելով վրան, ստեղծում է, իսկի ինքն էլ չիմանում, կապիկ, ոչխար թէ չաղացպանի շուն. իսկ ինքը հին փափախը (1) մինչև աչքերը ջրխտած, գաւազանը մի ձեռքին, իսկ չուանի ծայրն էլ միւս ձեռքում, փառաւոր կերպով դուրս է գալիս նկուղից։ Կապիկը գաւազանի չարժումներին համեմատ (եթէ սխալուի, գաւազանը իր ընթացքը փոխում է) պէտք է որպէս աղջիկ կար կարէ, որպէս հարս համր հունցէ, կինը մեռած մարդու նման չապկի ոջիլները չարդէ, պառաւի նման մանգալ և այլն և այլն։ Ուրախութիւնը տեւում է կէս գիշերից էլ դէն։ Ահա այս է ամբողջ տօնը. բայց չմոռանամ ասել, որ ճոխ կերպով հիւրասիրուում են տան տիրոջ կողմից ձմեռուայ համար պատրաստուած ամեն տեսակ միրգերով, որոնցից առաջին տեղն է բռնում թթու բռնած դդկորն ու սեխը։ Ա՛լո, ո՛րքան լաւ է։

ՎՇՏԵՐ

ԱՐՄԱՏԱՒԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Սիկիլիայի մէջ ծագած ներքին խռովութիւնները պատճառով, իտալեան կառավարութիւնը բաւական զօրքեր ղրկեց այդ կողմ և նաւատորմիղն ալ Բալերմոյի առաջ կը կենայ այժմ։ Կը յուսացուի որ Պըռքիսբի կը յաջողի չուտով հանդարտեցունել ժողովուրդը։

— Դեկտ. 18ին, Բիրէյի առջև, ռուսական «Ռինաա» չոգենաւին մէջ մի մեծ պարահանդէս տրուեցաւ։ Ծունաստանի թագաւորն ու թագուհին ներկայ էին. ներկայ էին նաեւ ֆրանսական և անգլիական դեսպանները և ֆրանսական «Քուամօ» չոգենաւի սպայները։ Թագաւորը ֆրանսերէն լեզուով բաժակ առաջարկեց ռուս նաւատորմղին համար։

— Գահիրէէն կը հեռագրեն Լոնտոնի «Տէյլի Նիւս»ին թէ «Տեղական մամուլը վերսին իր յարձակումները սկսած է Անգլիացիներին դէմ և ժողովուրդը անհնազանդութեան կը դրգռէ։» «Թայմըզ» լրագիրը Սըր Լաուրին Բալմըրի և Եգիպտոսի օբէնադրական խորհրդին միջև ծագած անհամաձայնութեան մեկնութիւնները տալով կը գրէ թէ յետսխաղաց քաղաքականութիւն սկսած է ասրել որ Լորտ Տըֆերինի տեղեկագրէն ի վեր Եգիպտոսի օգտին համար եղած ամեն բաները կուզէ ոչնչացունել։

— Վաստուածն կը հեռագրեն թէ մի կռիւ եղեր է իտալացիներին և տէրվիշներին միջև որոնք ստիպուեր են խառնաչփոթի վիճակի մէջ վախչիլ դէպի Աուսաիէք։

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ԲԱԺՆՈՐԴՆԵՐԻՆ

Արմենիայի ներկայ 9րդ տարեշրջանէ սկիզբը մենք ստիպուեցանք առժամապէս չարաթը մէկ թերթ միայն տալ մինչեւ գրաչարական դժուարութիւնների կարգադրուիլը, խոստանալով միանգամայն որ այդ միջոցին պակաս մնացած թիւերը դարձեալ տանք մեր բաժնորդներին։

Դրեթէ Հայ չգտնուած մի տեղ և նիւթական ոչ-ընդարձակ միջոցներով հայերէն մի թերթ կանոնաւոր ճշդութեամբ հրատարակելու դժուարութիւնների անունք միայն ծանօթ կը լինին ոորոնք փորձառութիւն ունեցած են և կամ հրատարակչական գործին հայ ազգի մէջ ունեցած վիճակին խելքերին կը հասնի։ Ուստի մեր կամքէ անկախ եղող պատճառներին ներողամտութեամբ կը նային անտարակոյս։

Ինչպէս կը տեսնեն մեր բաժնորդները, մեզ էժեցած այդ յանկարծ պակսագիլքին ևս յաղթած լինելով արդէն, հոկտեմբեր ամսի կէսէն ի վեր սկսած ենք դարձեալ չաբաթը 2 թերթ տալ, չորեքչաբթի և չաբաթ օրերը։ Այդ հաշուով, օգոստոսի 15էն մինչեւ հոկտեմբերի 15, երկու ամսի միջոցին 8 թերթ պակաս եղած եղաւ որոնց փոխարէն մէկ ամիս աւելի թերթ պիտի տանք մեր բաժնորդներէ անոնց որոնք 9րդ շրջանէ սկզբէն բաժնորդագրուած են։ Ցայտնի է

---

(1) Քանադացիները կառավարուում են իրենց յատուկ ազգային Պարլամենտով։

(2) Էմի նչանակում է հօրեղբայր։ Ամեն մարդ տարիքով իրենից ժէծին էմի է ասում։

de Lusignan. S'adresser aux Editeurs, MM. Godefroy et Danvers, 11, rue d'Hauteville, Paris. Prix, 5 fr.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Սիկիլիայի մէջ ծագած ներքին խռովութիւնները պատճառով, իտալեան կառավարութիւնը բաւական զօրքեր ղրկեց այդ կողմ և նաւատորմիղն ալ Բալերմոյի առաջ կը կենայ այժմ։ Կը յուսացուի որ Պըռքիսբի կը յաջողի չուտով հանդարտեցունել ժողովուրդը։

— Դեկտ. 18ին, Բիրէյի առջև, ռուսական «Ռինաա» չոգենաւին մէջ մի մեծ պարահանդէս տրուեցաւ։ Ծունաստանի թագաւորն ու թագուհին ներկայ էին. ներկայ էին նաեւ ֆրանսական և անգլիական դեսպանները և ֆրանսական «Քուամօ» չոգենաւի սպայները։ Թագաւորը ֆրանսերէն լեզուով բաժակ առաջարկեց ռուս նաւատորմղին համար։

— Գահիրէէն կը հեռագրեն Լոնտոնի «Տէյլի Նիւս»ին թէ «Տեղական մամուլը վերսին իր յարձակումները սկսած է Անգլիացիներին դէմ և ժողովուրդը անհնազանդութեան կը դրգռէ։» «Թայմըզ» լրագիրը Սըր Լաուրին Բալմըրի և Եգիպտոսի օբէնադրական խորհրդին միջև ծագած անհամաձայնութեան մեկնութիւնները տալով կը գրէ թէ յետսխաղաց քաղաքականութիւն սկսած է ասրել որ Լորտ Տըֆերինի տեղեկագրէն ի վեր Եգիպտոսի օգտին համար եղած ամեն բաները կուզէ ոչնչացունել։

— Վաստուածն կը հեռագրեն թէ մի կռիւ եղեր է իտալացիներին և տէրվիշներին միջև որոնք ստիպուեր են խառնաչփոթի վիճակի մէջ վախչիլ դէպի Աուսաիէք։

ԱՐՄԱՏԱՒ

որ ներկայ 9րդ չրջանը կսկսի օգոստոսի կէսէն և կը տեւէ մինչեւ 1894 ապրիլ ամսի վերջը: Հետեւապէս անոնք որ սկզբնէն բաժնորդ գրուելով 5 ֆրանգ միայն վճարած և 2 ամսի բաժնորդագրութեան ստացագիր առած են, իրենց բաժնորդագրութիւն փոխանակ հոկտեմբեր 15ին վերջանալու (ինչպէս գրուած է ստացագրի մէջ), իրաւունք կունենան Արմենիա ստանալու մինչեւ 1893 նոյեմբեր 15: Տասը (10) ֆրանգ վճարելով 4 ամսի համար ստացագիր ունեցողների բաժնորդագրութիւնը, փոխանակ դեկտեմբեր 15ի (ինչպէս գրուած է իրենց ստացագրի մէջ), կը տեւէ մինչեւ 1894 յունվարի 15: Իսկ ամբողջ չրջանին համար 20 ֆրանգ վճարածների բաժնորդագրութիւնը, փոխանակ 1894 ապրիլի վերջին (ինչպէս գրուած է իրենց ստացագրի մէջ), պիտի տեւէ մինչեւ 1894 մայիս ամսի վերջը:

Անոնք որ ներկայ 9րդ չրջանի Ա. Թուէն բաժնորդագրուած չեն, իրենց թերթեր չպիտի 2 անգամէն պակաս ստացած չլինելով, ինչպէս իրաքանչիւր ամսի նոյնպէս և 1894 մայիս ամսի թերթերն ստանալու համար ալ կը պարտին վճարել 2 1/2 ֆր.

1894 մայիս ամսէն ետեւի բաժնորդագրութիւն չընդունելը որովհետեւ ինչպէս արդէն մեր սովորութիւնն է, այն ժամանակ կսկսինք բաժնորդագիրն ընդունիլ յաջորդ չրջանի համար երբ նոյն չրջանի բաժնորդագրութեան բացուած լինելն ու պայմանները կը հրատարակուին Արմենիայի մէջ:

ՕԱԽՄԻ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերը կարելի է ըստանալ Արմենիայի խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած դիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու փոստի ծախքը:

Արժէքը կանխիկ վճարուած՝ գիրքը ղրկուի:

ՍՈԽԱԿ. Լիակատար երգարան: Հրատարակեց Գրիգոր քահանայ Գրիգորեանց: Հատոր Ա. Տպագր. Մոսկուա 1890: (Կը պարունակէ 282 երգեր, ինչպէս հիներէն, նոյնպէս և նոր երգերէն չատեր) 4 ֆրանգ:

Խրիմեան Հայրիկ, Դրախտի ընտանիք: 1 ֆր. 75 սանթիմ:

Խրիմեան Հայրիկ, Սիրաք և Սամուէլ: 1 ֆր. և 75 սանթիմ:

ԺՕՐԺ ՍԱՆ — Գարիբալդիի կենսագրութիւնը ,35 սնթ.:

Րաֆֆի, Արծիւ վաստպրականի (Խրիմեան Հայրիկ): 1893 (Լչվիաձնի կաթողիկոսութեան և Խրիմեան Հայրիկի մասին Րաֆֆիի գրածների մէկ ամփոփումն է: Սկիզբը գրուած է վեհ. Հայրիկի պատկերը):

գին 2 ֆր. 45

Րաֆֆի, կայծեր Ա հատոր 7 ֆր.
» , » Բ 8 — 50
» , » վերջը 1 — 75
» , վէպիկներ և պատկերներ Ա 7 —
» , վէպիկներ և պատկերներ Բ 7 —

Հ. Բարսեղ Պարգիսեան, Ուսում առնասիրութիւն Մանիքէա Պատրիկեան Թոնրակեցիներու աղանդին և Գր. Նարեկացու Թուղթը (կրօնական նորելուկ գաղափարների տարածման պատճառով Հայաստանեայց ժողովրդին մէջ ծագած երկարատեւ և մեծ յուզումների մի առանձին ուսումնասիրութիւն է որի մասին գրուած չկայ Հայոց պատմութեան դասագիրքերին մէջ):

2 ֆր. 20 սնթմ.:

Գիւտ Բահանայ Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան. Գիրք Ա. Բ. 1780-1834. Տպագր. Թիֆլիզ. 1893 (Հայոց աղգի 54 տարու պատմութիւնը կը ներկայացնէ, մասնաւորապէս Լչմիածնի գլխէն անցածները, պատմական վաւերաթուղթերով: Սկիզբը գրուած է կարբեցի Յովհաննէս կաթողիկոսի պատկերը: Այս աշխատութիւն արժանացած է Ոսկեայ Մեդալով Մոսկովեան մրցանակին): 7 ֆր.

Կոստանդին Ապրիկեան, Հայրենիքից դուրս: Վէպիկ. Հրատարակութիւն Մ. Թարվերդեանի (Մեծագոյն բազդի յոյսերով հայրենիքէն դուրս եկած մի հարուստ գիւղացու պատահած թշուառութիւնները կը նկարագրէ որ հազիւ իր հայրենիք վերադառնալով հոն կրցած է գտնել իր հանգստութիւն): 50 սնթմ.

ՕԱԽՄԻ ԳԻՐՔ ԵԻ ՊԱՏԿԵՐ

Հ. Ց. Վ. Խաւիէրտենց. Կրթարան անգլիական լեզուի (Անգլիերէն լեզուն դիւրին և գործնական ոճով սովրեցնող քերականութիւն մ'է հրահանգներով մէկտեղ): Ա հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ հատորը 216 երեսէ. վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգների անգլիերէն թարգմանութիւնն է: Երկու հատորը միասին՝ 5 ֆր.: (1 տոլար ամերիկեան):

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած: 1 ֆրանգ:

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍԲՐԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սբրբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիայի խմբագրատունը: Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով:

ՀԱՑՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ հաճառօտ կերպով բացատրուած է թէ իրաքանչիւր հայ. բնաւէր հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու:

Կը խնդրուի ամեն հայրենասէր հայելէ իրենց չրջանի մէջ տարածել այս տետրակ: Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 3 ֆրանգով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ):

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերին վրայ ժամանաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի ֆակտուրի մէջ նչանակուած դիներովը:

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած):
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՍԱՂՄՈՍ ԻՕՐԱՑԷԼԻ »
Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ՊԵՆՁԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներէ պանդխտութեան տխուր հետեւանքներէն մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացնէ վիպական կերպով:) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց աւարտեալ (Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են): 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ:

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԴԸ ՏԱՃԿԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱՅ ՀԱՑԵՐՆ ՆԻ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիայի Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ: Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուէն բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը:) Գին 50 սանթիմ (35 սանթիմ):

Թ. «ԱՐՄԷՆԻԱ» ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի դրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են ցուշարարի մէջ որ ութ ծալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ): (1 ֆրանք): 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիայի մէջ թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար): (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՈ (Ծունեաստանի մէջ թիւրքերի արած բարբարոսութիւն. ներէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացնէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցների դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15 սանթիմ) ,20 սանթիմ:

ԺԲ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՕՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրեւ նմոյշներ զանազան քաղաքներու մէջ և զանազան տպաւորութիւնները տակիտ երբեմն գրած ոտանաւորներուն որոնք ժամանակին հրատարակուած չ'լինելով կորսուած են այժմ: Այն մի քանի ոտանաւորները որոնք իրրև նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տպագրուած ազգային երգարաններուն մէջ՝ որոց վերատին տպագրութիւնն վաղուց արդէն արգիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներին մէջ: Նմոյշներու մէջ փոքրիկ տեղեկութիւններ տրուած են նաեւ թէ այդ ոտանաւորները ի՛նչ տպաւորութիւնների տակ ներշնչուելով գրուած են: Գին (10 սանթիմ) 15 սանթիմ:

Աստղիկ զատ, Արմենիայի խմբագրատան մէջ ծախու կը գտնուին նաեւ Հ. Ալիշանի, Հ. Ինճիճեանի, Հ. Գարեգին Զարըհանէլեանի, Րաֆֆիի, Մեծենցի հրատարակուած բոլոր գիրքերն, ինչպէս և ուրիշ օգտակար գիրքեր և քարտէզներ Հայաստանի՝ Հայերէն կամ լատինական տառերով և զանազան գիներով և լն. և լն.:

Գրավաճառանոցի ժանրամաս ցուցակը որ 90 երեսներէ կը բաղկանայ, ցանկացողներին կը ղրկուի ձրիապես:

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ Ա ԻՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացնէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներու պատճառ դարձած է և վերջի վերջոյ ինք ալ իր որդու ձեռքով սպաննուած և անհետացած է աշխարհէ: Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ):

ՑՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.
ՄԱՐՍԷՑԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi, Allées de Meilhan, 44.